





թոյլ տալ որ ռամիկը կոխտէ մեր հոգւոյն զգացումները, առարկայ չդարձնելով զայն իր քննադատութեան:

Խորհրդապաշտ գպրոցը ընդհակառակն՝ թողած արտաքինը կեդրոնացաւ մեր ներքին աշխարհին, մեր հոգեկան ապրումներուն, ներքին կեանքին նոյն իսկ ամէնէն աննշմար անցնելիք խորին ծալքերուն մէջ փնտռելով իր երգին նիւթը: Ոչ միայն կը փոխուի հոս (դիտելի կարեւոր կէտ մը) նիւթը, այլ այդ նիւթին արտայայտութեան եղանակը: Խորհրդապաշտները ուղղակի չեն ուզեր խօսիլ, այլ միայն անուղղակի, խորհրդանշաններու միջոցաւ ձգտելով դէպի մտադրուած գաղափարը: Կը սիրեն անոնք նրբերանգով արտայայտուիլ, համոզուած թէ յստակութիւնն ու պարզութիւնը կը վերցնէ հմայքն ու խորհուրդը գրուածքին: Մալլարմէ կը լուսարանէ իր «suggerer, voilà le rêve»-ով՝ այդ իրենց արտայայտութեան դրութիւնը, հեղինակը պառնաւ սեանները որ ամբողջապէս ցոյց կու տան առարկան զրկելով զայն քիչ առ քիչ գուշակելու հաճութեն. «nommer un objet, c'est supprimer les trois quarts de la jouissance du poème, qui est fait du bonheur de deviner peu à peu» (Réponse de Mallarmé à J. Huret).

Տողեր՝ որ կը շեշտեն հարկաւորութիւնը խորհրդանշաններու գործածութեան և մտքի այն ճիգին՝ թափանցելու քերթուածին գաղափարային էութեան մէջ, որ երբ տիրապետուի՝ կը պատճառէ մտքին համար ամէնէն մեծ խրախճանքը:

Խորհրդապաշտները կը մեղադրեն դարձեալ Պառնասեան գպրոցի բանաստեղծները՝ իբր չափազանց մտահոգութեան ձեւին կատարելութեամբ, այնպէս որ Սիւլիի Փրիւտով մը, Բիլիէն մը իրենց համար բանաստեղծներ են, որոնք տաղաչափական ճշտութիւններու, բացատրութեան ճշգրտութեան մէջ կը խեղդեն մտածութիւնն ու զգացումը: Աւստի ձկտում մը՝ ձերբա-

ղատուելու խիստ օրէնքներու պարտադրութեան՝ ըլլան անոնք քերականական կամ տաղաչափական, ազատութիւն՝ նկատմամբ բառերու կերտումին, նկատմամբ յանգերու, նկատմամբ չափի: Կան այդ բանաստեղծներուն մէջ՝ որ աղեքսանդրեան չափի դարաւոր գործածութեան հակառակ՝ որդեգրած են նոր չափեր, երբեմն նոյնիսկ այնպիսի լայն տողերով՝ որ կը մօտենան արձակին: Այս տեսակ զեղծումները սակայն մեծ վարպետներու անտաղանդաւոր աշակերտները միայն կատարեցին: Ազատութեան այս տեսչը չափազանցութեան տարուած չէ հետեւաբար ոչ Վերլէնի, ոչ Մալլարմէի և ոչ անոնց հաւատարիմ հետեւող Վալերիի քով. սակայն միշտ խուսափեցան անոնք ալ այն ամէն բանէ՝ որ կը ճնշէ երեւակայութեան սլացքը, թափը զգացումին՝ կապանքներու ենթարկելով արտայայտութեան ազատութիւնը:

Խորհրդապաշտները փնտռեցին միանգամայն հասուն, սահուն երաժշտութիւն մը, զայն քարոզեցին ու շեշտեցին. ալ հասարակաց տեղիք դարձած է կրկնելը Փօլ Վերլէնի անհրաժեշտ պահանջը. «De la musique avant toute chose! De la musique encore et toujours!» Այդ երաժշտական ներդաշնակութեան վարպետն էր Վերլէն, հակառակ դարձեալ Պառնասեաններու, որոնք մտահոգուած էին պարզապէս ճշգրիտ, չափուած, ձեւով կատարել, տողեր և տուներ տալու: Արտաքին արտաքին հաւանք (L'art pour l'art) իրենց վարպետութիւնը՝ կը պարտադրէր քերթողը արտադրելու գործ մը որ ըլլար գեղեցիկ. այս ահա էր միակ և զխաւոր նպատակը, որուն կը ձկտէր պառնասեանը՝ թողած ամէն ուրիշ պահանջ. ասոր համար է որ անոնց բանաստեղծութիւնները, մարմարեայ ու քանդակածոյ գործերու պէս՝ իրենց ճշգրիտ, յստակ ու չափուած գծերով՝ աւելի փրատիկ արուեստին կը մօտենան, քան երաժշտութեան: Խորհրդապաշտներու պահանջած

երաժշտականութիւնը սակայն՝ լոկ տողերու ներդաշնակ քալուածքը չէ անշուշտ, այլ ամբողջ այն քերթողական մթնոլորտը՝ տարտամ ու անորոշ գծերու մէջ արտայայտուած, որ տեղի կու տայ խորհրդածելու, երազանքի թեւերուն վրայ անցնելու անսահման հորիզոնները խոկումի ու զգացողութեան:

Գրականութիւնը, ինչպէս փիլիսոփայութիւնը, մարդկային գաղափարներու յեղաշրջումին պատմութիւնն է. պատմական դէպքերու նման կը կրկնուին գաղափարական դրութիւններն ալ զանազան ժամանակներու մէջ: Խորհրդապաշտ գրական դպրոցը, որ անցեալ դարու վերջերը և մեր դարուն սկիզբը յայտնի գրական հասանքն եղաւ, վերաբաժնուեց է ոսմանդիկ դպրոցին՝ բանաստեղծին անձնականութեան տուած մեծ կարեւորութեամբ, վերադարձումն է գաղափարապաշտ փիլիսոփայութեան՝ որ գերմանացի մեծ իմաստասէրին հեղինակութեամբը այնքան երկիր ու հող չահեցաւ մտքերու մէջ: Անոր համաձայն գաղափարներու ինքնածին աշխարհ մը կայ մեր մէջ. և մեր ճանաչողական կարողութիւնը՝ այդ գաղափարներուն իրական պատկերը ցոլացնելով է որ կը հասնի ճանշնալ այս թանձր երեւելի աշխարհը: Խորհրդապաշտները խուսափելով նկարագրելէ արտաքին բնութիւնը, արտաքին իրականութիւնը իր մերկ ու մեկին պարզութեանը ու ճշմարտութեանը մէջ և կեդրոնանալով մեր հոգեկան ներքին ապրումներու նախալով մեր հոգեկան ներքին ապրումներու աշխարհին մէջ՝ Քանթի վերանցական փիլիսոփայութեան հետ սերտ առնչութիւն ցոյց տուին:

Ըսելու է նաեւ որ խորհրդապաշտ գպրոցի ծագման նպատեց ժամանակին Պրիւնը-թիէրի հեղինակութեամբ ուժ առած պայթիւնի հեղինակութեամբ ուժ առած պայթիւնը ընդդէմ Զոլայի բնապաշտ գպրոցին, ինչպէս նաեւ արդի հոգեբանական գիտու-

թիւններու զարգացումը՝ որով կրկին վերաբաժնուեցան մարդկային հոգեբանութեան անգիտակից երեւոյթներու քննութիւնը (philosophie de l'incoscient), որոնց գոյութիւնն առաջին անգամ անդրադարձնել տուած էր Լայպնից: Մեր մէջ կան ստուգիւ հոգեբանական այնքան տկար և չփոթ վիճակներ, որ անշատ ու յստակօրէն չեն զգացուիր մեզմէ՝ բայց սակայն գոյութիւն ունին, ինչպէս բնափոսական կարգին մէջ չնշելու, արտաշնչելու, արեան չրջանին, մարտողութեան գործողութիւնները: Խորհրդապաշտներն եղան ուրեմն որ այդ աղօտ, միգամածային մեր զգայնութիւններու երգը մտցուցին բանաստեղծութեան մէջ՝ ու կերպով մը ձօնացուցին նիւթը գեղարուեստի այդ ճիւղին:

Հիմա կրնանք հասկնալ նաեւ պատճառը այն տաղաչափական ու քերականական ազատութեան պահանջին՝ զոր կը դնէին այդ գպրոցին բանաստեղծները. որովհետեւ այդ գպրոցի հեղինակութեամբը այնքան երկիր ու հող չահեցաւ մտքերու մէջ: Անոր համար էր ունենալ ձկտն քերթողական գործիք մը, լեզու մը՝ որ կապկպուած չըլլար աւանդական խիստ օրէնքներու:

Գարձեալ հասկնալի կը դառնայ այն մթութիւնը, որ կայ անոնց քերթուածներուն մէջ, իբր բնական հետեւանք այն ճիգին՝ որով կը ձկտին արտայայտել անբացատրելի մեր հոգեկան ապրումներուն մէջ: Անշուշտ թերութիւն մըն է այդ, բայց միւս կողմէն ներարկում մը բանաստեղծութեան երակին մէջ գաղափարականի, երազանքի, խորհուրդի տեսակէտներուն, որոնցմով մարդկային հոգիէն անշատուող բանաստեղծութիւնը պառնասեաններով՝ նոր կորով ու շեշտ կը ստանար:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)